

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավիճակով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐԱԿԱՆ ԱԿՈՍ“-Ի № 1


Պատկերաբներ բոլոր յիշերների, միացեք.

L. ՏՐՈՅՆԻ

ՎՈՐ ՓՈՒԼԸ ԵՒԲ ԱՆՑՆՈՒՄ

(Ճ Ա Ռ)

Էնկ. ՏՐՈՅՆԻ ՆԿԱՐՈՎ



ՏԵՐԵՎ. Ա. Ե.
ՏՐԵՍԻ Ա. Ա. ԶԻՆ ՏՊԱՐԱՆ

1924

3КП1

Կ - 93

329.15
S-96

* 5 JUL 2005

14 NOV 2005

300
1654-SR


L. ՏՐՈՅԿԻ

ՎՈՐ ՓՈՒԼՆ ԵՆՔ ԱՆՑՆՈՒՄ ՄԵՆՔ

1003
19472

Ընկ. Տրոյկու նառը Առողջապահության
Գործիչների Համամիութենական Համագու-
մարում

(Մոսկվա, 1924 թ, հունիսի 21)



3 K P L E
N - 93
EUS VOL 47

4909

EUS VOL 45

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924



3531

2982-89



L. ՏՐՈՑԿԻ.

Նկար Գ. Ա. Ե. Ե. Կովկի

ՎՈՐ ՓԹԻԼՆ ԵՆՔ ԱՆՑՆՈՒՄ ՄԵՆՔ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՈՒԺԸ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ
ԱՍԻԴԱՆԸ

Վերջերս Սակոնիկում կայացած մի մեծ ժողովում զեկուցելիս, ինձ մի հարց տվին, վորին յես ժամանակ չունեց պատասխանելու և վորի պատասխանը յես ուզում եմ տալ այսոր այսոեց։ Այդ հարցը սերտ կապ ունի թի միջազգային կացության հետ, բառիս ամենալայն իմաստով և թի կոմինտերնի 5-րդ կոնգրեսի հետ։ Իմ ստացած հարցատոմսը գրապահում եւ ահա նա։ — «Ենկեր Տրոցկի, բացատրեցեք, ի՞նդրեմ, ինչու ամենասառաջավոր, ամենազարգացած կապիտալիստական յերկրները (Ամերիկան, Անգլիան) ամենաթույլ կոմունիստական կուսակցություններ ունեն և ամենից հեռու յեն սոցիալիստական հեղափոխությունից։ Այս հարցը խիստ տանջում եւ ինձ հնգրում ենք բացատրելու։ Այս և հարցը՝ Յեկի իրոք, ինչով և բացատրվում այն, վոր ամենասառաջավոր, ամենակուլտուրական յերկրները թույլ կոմունիստական կուսակցություններ ունեն, և ընդհակառակը»

մեր յերկիրը, վորը, դժբախտաբար, չի կարող Յելրոպայի ամենակուլտուրական յերկիրը կոչվել՝ ունի ամենառութեղ և մի հսկայական պետություն կուսափառող կոմունիստական կուսակցություն։ Իրաք վոր այս հարցը շատ շատերին կարող է մտատանջություն պատճառել։ Յեվ գա հասկանալի յի։ Մենք գիտենք, վոր միջազգային մենշենիզմը՝ ուսւականից սկսուծ հենց այդ հակասության վրա ել հիմնում է կոմունիստական միջազգային կուսակցության և խորհրդային հանրապետության դեմ ուղղած իր զբուխավոր «մեղազրանքը»։ Չե՞ վոր, յեթե այդ հակասությանը լոկ տրամարանորեն, զուտ մեքենարար մոտենանք, դժվար չե այն յեզրակացության հանգել, վոր կոմունիզմը.... հետամիացության ու բարբարոսության արտահայտություն ե, առ զի ու 6 է ե։ Վ ո ր է ա 6 ավելի հետամիաց և մի յերկիր, աչնչափ ավելի ուժեղ և այստեղ կոմունիզմը, մինչեւ գերեկուլտուրական Ամերիկան ու Անգլիան բարբարոսության իրրի թե փոքր մնացորդներին համապատասխան ամենաթույլ կոմունիստական կուսակցություններ ունին։ Առաջին հայացքից, կարծես իրոք վոր այսպես և դուրս գալիս։ Դրա վրա ել կառուցված և միջազգային մենշենիզմի փոխառփառ թյունն ամբողջովին։ Թույլ ավելի, ուրեմն, վերին առարձանի կարենքոր այդ հարցին պատասխան տալ գեթ հիմնական և ընդհանուր գծերով։

Կոմունիստական Ինտերնացիոնալի համագումարում յելքութական կոմունիստական կուսակցություններից ամենաթույլը, իրոք վոր անգլիական կոմունիստական կուսակցությունն է. ձիշտ և, ամերիկա-

կանն ավելի թույլ ե, բայց խոսքս առաջմմ Յելքութայի մասին ե։ Ամենազորեղ կուսակցությունը մերն ե։ Հետո գալիս ե զերմանականը, հետո՝ ֆրանսիականը... Իրականության մեջ ինչով և բացատրվում այն փաստը, վոր Անգլիայի պես զորեղ, կուլտուրական, լուսավորված, քաղաքակրթիված և այլ բարեմասնություններով ոժտված յերկրում կոմունիստական կուսակցությունն առաջմմ պրոպագանդիստական ընկերության գրության մեջ ե, և ակտիվ քաղաքական գեր խաղալու հնարավորություն չունի։

Ակզիրց և յեթ մի կողմ հետեւու համար առաջին հայացքից այն պարզ, զյուրին և հարմար բացատրությունը, վոր իբր թե կոմունիզմն ուղիղ հարաբերական և հետամիացության ու բարբարասության, մի բացատրություն, վոր մենշենիզմական վողջ իմաստությունն և հանգիստանում յես ձեզ կը հիշեցնեմ ՄեծԲրիտանիայի կյանքի մի քանի այլ յերեսութները և հաստատությունները։ Անգլիայում, չմոռանաք խընդրիմ, —գոյություն ունի միապետություն, իսկ մեզ մոտ այդ չկա, չկա և ֆրանսիայում, չկա և Գերմանիայում։ Միապետությունը, վոնց ուղում եք շուռ տվիք, վոչ մի անսակետց չի կարելի բարձրագույն կուլտուրայի, մարդկության ամենաբարձր նվաճումը համարել. այդ Մակրոնալդն իսկ չի անի, նա կը լոի, քաղաքագորի և զիվանագիտական լեզուն կը կծի, բայց չի ասի, թե Անգլիայի բարձրագույն կուլտուրայի արտահայտությունն այն ե, վոր նա ի ասբրերություն բարբարոս նուսաստանից միապետություն ունի։ Անգլիայում մինչև հիմա յել զոյություն ունի արխանկրատիա, վորն ոժտված և զասային արտոնություններով։ Կա

Երդերի պալատ: Վերջապես Անգլիայում գոյություն ունի յեկեղեցու հակայական ձնշիչ ազգեցություն ամբողջ կենցաղի վրա: Անշափ դժվար և այնտեղ ամեն մի առանձին դեպքում պատռել փարիսեցիության, յեկեղեցական համապաշտարությունների և այդ յերկուսի վրա հիմնած կենցաղային սովորությունների խիստ ցանցը:

Զեղնից վոչ վոք, հուսով ևմ, չի ասի, թե յեկեղեցու կոս յեկեղեցիների տիրապետող ազգեցությունն ու ձնշումը հասարակական գիտակցության վրա՝ մարդկային առաջադիմության, պրոգրեսի արտահայտություն և հանդիսանում: Այսպիսով, տեսնում ենք, վոր Անգլիայում այն փաստի կողքին, ինչպիսին և Կոմունիտական կուսակցության թուլությունը, գոյություն ունեն մի քանի այլ մեզ համար վոչ անշան փաստեր, զորորինակ՝ միապետության, արիստոկրատիայի, լորդերի պալատի գոյությունը և կրոնի հակայական ազգեցությունը քաղաքականության, հասարակական կյանքի և կենցաղի վրա: Յեկ յեթե Անգլիային մոտենանք միակողմանի, հենց այս ծայրից, այսինքն ի նկատի առնենք միապետությունը, լորդերի պալատը, արիստոկրատիան, ազնվապետական հոգատիրությունը և յեկեղեցու տիրող ազգեցությունը, այն ժամանակ ձիշտն ասած, կարելի յեյեղբակացնող վոր ամենահետամնաց, ամենաարարրարոսական յերկրը Յեկրուպայում Անգլիան է: Այդ նույնքան ուղիղ կը լինի, ինչքան ուղիղ և մենակիների պնդումը, թե կոմունիզմը հետամնացության արդյունք և, այսինքն կլինի նույնքան, սիալ և նույնքան միակողմանի: Իրոք, կարելի յե արդյոք յենթակրել, վոր Ան-

գլիան Յեկրուպայի ամենահետամնաց յերկիրն է: Վաշինգտոն մի կերպ չի պարտակվում Անգլիայի մասին մեր ունեցած հասկացողության շրջանակներում: Անգլիայում տեխնիկան ամենաբարձրն է, իսկ տեխնիկան ամենամեծ վորոշիչն և մարդկային կյանքում: Ամերիկան, ձիշտ և, Անգլիայից առաջ և անցել տեխնիկայի առարկիզում: Անգլիական կուլտուրայի աղջկն իր հետեւ և թողել մայրենական կուլտուրան տեխնիկայի ճանապարհին: Մինչև ուստիրազմն Անգլիայի հետ մրցում եր Գերմանիան, վորն սպառնում եր առաջ անցնել և վորոշ առարկիզմությունը առաջ անցավ Անգլիայից: Բայց հիմա, Գերմանիայի ջախջախվելուց հետո, Անգլիան տնտեսապես առաջնագույնն է Յեկրուպայում: Անգլիան գիտությունը, գրականությունը, գեղարվեստը առաջ ել խաղացել են և հիմա յել առաջնակարգ դեր են: Խաղում մարդկային մտքի զարգացման և մարդկային ստեղծագործության պատմության մեջ: Ի՞նչ յեկրակացություն հանենք այս ամենից, ինչպիս գուրս գանք այս հակասությունից: Վորովհետև հակասությունը մեր աչքի առաջն և մի կողմից բարձր տեխնիկա, գիտություն և այն, իսկ մյուս բեկնում՝ միապետություն, արիստոկրատիա, լորդերի պալատ, կրօնական նախապաշտարմանքների տիրապետություն հասարակական գիտակցության մեջ: Ի՞նչ յեկրակացություն հանենք սրանից: Յեկրակացությունն այն և, վոր չկա մի այնպիսի արշին, վորով հնարավոր լիներ չափել յերկրի զարգացումը բոլոր առարկիզմերում և այդ չափել հիմնան վրա միապետական արժեքավորություն տալ հասարակական կյանքի բոլոր կողմերին ու

յերեութներին: Զարգացումը հակասական է: Վորոշ ասպարիզներում մի յերկիր հսկայական նվաճումներ եռնենում, բայց շատ հաճախ պատահում է, վոր հենց այդ նվաճումներն ու հաշողությունները կասեցնում են յերկրի զարգացումը մյուս ասպարիզներում:

Այս միտքն ավելի կոնկրետ կը պարզաբանեմ: Անզլիան առաջինը թեակոլիսց կապիտալիստական դարգացման շրջանը և դրա շնորհիվ 19-րդ դարում համաշխարհային շուկայի գերիշխանը դարձավ: Անզլիական բուրժուազիան ելի դրա շնորհիվ ամենից շատ հարստություն դիմեց, ամենից լուսավորն ու ամենից հզորը դարձավ: Այդ պայմանները, ինչպես զիտեք, նրան թույլ տվին արտօնյալ զրություն ստեղծել Անզլիայի բանվոր դաստկարգի վերին խավերի համար և հենց այդպիսով ել բթացնել դաստկարգային հակամարտությունը: Անզլիական բանվոր դաստկարգն իր ինքնուրույն և բուրժուազիային հուկառակորդ դաստկարգ լինելն ավելի դանդաղ և հասկանում, քան բանվոր դաստկարգն ուրիշ, ավելի նվազ ուժեղ բուրժուազիա ունեցող յերկրներում: Այսպիսով, տեսնում եք, վոր անզլիական բուրժուազիայի բացառիկ նպաստավոր պայմաններում ընթացող աճումը կասեցրեց, դանդաղացրեց անզլիական՝ Յերուսաղեմական ամենաառաջարկ յերկրի պրոլետարիատի դարգացումը: Անզլիական տեխնիկայի դանդաղ և «որդանական» աճումը, բուրժուազիան ոեփորմացիայի և բուրժուազիան հեղափոխության մերձեցումը կասեցրին քննադատական մտքի զարգացումը յեկեղեցու հանդեպ:

Անզլիական բուրժուազիան զարգացել և հին

հաստատությունների ծածկոցի ներքո, մի կողմից հարցարվելով նրանց, իսկ մյուս կողմից նրանց իրանցնթարկելով, աստիճանաբար, որգանապես, «կոլյուցիայի», միջոցով: 17-րդ դարի հեղափոխական ցընցումները մոռացված են: Դրանում ել կայանում է այսպես կոչված անզլիական տրադիցիան: Նրա հիմնական գիծը՝ պահպանողականությունն և, կոնսերվատիզմը:

Անզլիական բուրժուազիան ամենից շատ նրանով և պարձենում, վոր ինքը չի քանդել հին շնչքերն ու հավատալիքները, այլ հետզետե, աստիճանաբար հին կայսերական-ազնվական ամրոցը հարմարեցրել և իր առետրական ֆիրմայի կարգիներին: Այդ ամրոցում, անկյուններում իրենց սուրբ պատկերները, իրենց սիմվոլները, իրենց ֆետիշները կային՝ բուրժուազիան զրանք գուրս չի տարել. բուրժուազիան ոգտագործել և այդ ամենն իր տիրապետությունը՝ սրբազնությունը համար: Յեկ նու վերելից պրոլետարիատի գլխին կուլտուրական կոնսերվատիզմի ծանր կափարիչն և զրել:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՅԵՎ ՄԵՐԸ

Անզլիական բանվոր դաստկարգը զարգացել են բոլորին այլ կերպ, վոչ այնպես, ինչպես մեր բանվոր դաստկարգը: Մեր յերիտասարդ պրոլետարիատը մի հոտարվածեց առաջ յեկավ իր ձնշող մեծամասությամբ գյուղացիներից և անայնազործներից (կուստարներից),

վորոնք ապրելիս են յեղիլ գյուղում, հայրերի և ողողերի հետ, տնտեսապես հետամնաց միջավայրում և խովարի ու կրօնական նախապաշարմունքների ձիրանութում: Կապիտալն անխղճորեն բանեց գյուղացու զավակի ոձիքից և միանգամբց նետեց նրան գործարանային կաթսոյի մեջ: Պայմանների փոփոխությունը կատաստրոֆիկ եր: Յերբ զործարանային գոլորշին տվեց գյուղացու տղի յերեսին, նա միանգամբց ոկտեց խորհել, թե վրանեղ և ինքը, և ինչ և ինքը: Այդ ժամանակ վրա հասավ հեղափոխական կռւսակցությունը և սկսեց բացատրել, թե ինչ և նա և վրանեղ և զըտնվում: Կռւսակցությունն առավել ևս հեշտությամբ տիրեց ոռւս բանգորին, վրոգհետեւ ոս վոչ մի պահպանողական հասկցողություններ չուներ. հին գյուղական հայացքները միանգամբ անգետք եյին՝ աշխարհահայացքի հիմնովին ու լիովին փոփոխումն եր պահանջում նրանից: Անզլիական բանգորն ուրիշ բան եր: Նրա հայրն ել, պապն ել բանգոր եյին յեղիլ, իսկ նախապատերը մահր արհեստավորներ:

Անզլիական բանգորն ընտանեկան տահանգիր ունի, նա տոհմային տրադիցիա ունի: Այդ ել իր տեսակի «կռւլտուրականություն ե», բայց նա արտահայտվում և նրանով, վոր անզլիական բանգորն իր գիտակցության մեջ իր ձեռագոր նախապատի նախապաշտարմունքներն և քարշ տալիս: Նա՝ անզլիական բանգորը, չի տեսել այն շրջանը, յերբ գյուղական փակ աշխարհիկը հանկարծակի սուր և կատաստրովիկ կերպով ինդուստրիայի յի վերածվել, նա որդանապես է ծագումն և առելու զարգացել իր հեռավոր նախներից և գործարանային կյանքի ու քաղաք-

յին կռւլտուրայի աստիճանապես փոխվող պայմաններից: Նրա գիտակցության մեջ մինչև այժմ ել նստած են հին համբյարական միջնադարյան հայացքներն ու նախապաշարմունքները, միայն փոփոխված և կապիտալիզմի պայմաններին հարմարեցված: Համբյարային կյանքն ու համբյարային առնելու հյին վորդու ծնունդը, նրան ուսման տալը, ինքնուրույն աշխատանքի անցնելը, վարպետ զանալը և այլն՝ ամեն ինչ կրոնականությամբ եր համակված, և այդ կրոնականությունը փոխանցել եր տրեգ-յունիոններին, զորոնց կոնսերվատիզմի ծանր պոչը զեղի միջնադարն և ձգված...

Անզլիական տեխնիկան հիմնական կապիտալիստական տեխնիկա յի: Նա զրսից չի բերված ազգային տնտեսական ձեռքի քայլքայման ձանապարհով, այլ բղիում, և զարգ. այդ ազգային ձեռքից զարգանում: Բանվոր դասակարգի գիտակցությունն արտացոլում և տեխնիկայի այդ «որդանական» զարգացումը, ըստ վորում, չափազանց հետ և մնում նրանից,

Զպետք և սոսանալ, վոր մարդուս գիտակցությունը՝ հասարակության մասշտաբով վերցրած՝ սարսափելի պահպանողական և, և անշարժ: Միայն իդեալիստներն են յերեակայում, թե իբր թե աշխարհը մարդկային մաքի տղատ նախաձեռնության շնորհիվ և առաջ զնում: Իրականում մարդուս կամ հասարակության միտքն առանց ծայրահեղ կարիք ունենալու վոչ մի քայլ չի անում: Աւր վոր հնարավոր և, հին սովորական միտքը հարմարվում և նոր հանգամանքներին: Յեթե պարզ ասենք, զասակարգերն ու ժողովուրդները վճռական նախաձեռնություն հանդե-

Հրաժեշտությունն զգացին: Նրանց սպնության հասավ սոցիալ-դեմոկրատիան, վորը սովորեցնում եր խզել կապերը հին նոտիսապաշարմունքների հետ և այդպիսով հեղափոխական ճանապարհով ծնած բանվոր դասակարգին հեղափոխական ինքնագիտակցություն եր տալիս: Ահա հիմնական գծերով լուծումն այն հարցի, վոր արդած եր ինձ և վորը իմ հերթին յես դրի ձեր տոջե:

Կարելի յէ ասել, վորքան զորեղ, խելացի, ամուր և յեղել բուրժուազիան, այնքան ավելի շատ և հաջողվել նրան կասեցնել պրոլետարիատի գաղափարական, ասել ե՞ւ և հեղափոխական զարգացումը: Դա նույն ճշմարտության մի այլ արտահայտությունն է:

Մեծ Բրիտանիայի բուրժուազիան սովոր և իր իսկ գաստիարակած, ձեռնասուն, այսպես կոչված բանվորական առաջնորդների լակեյությանը: Ահա ձեզ մի քաղվածք անզիւխական կիրակնորյա «Թայմ» թերթից: Թերթը գանգատվում է, վոր այժմ Անգլիայում Մակոնայլի կառավարության որով բուռն գործադրութեր են սկսվել և առում է. «Մեզ մոտ, Մեծն Բրիտանիայում աշխարհիս լավագույն բանվոր առաջնորդների կազմ ունինք, փորձված մարդկի են նրանք հայրենասիրությամբ տոլեցուն, պատասխանատվության զգացումի տեր և տնտեսական գիտություններին հմտութ, բայց և այսպես նրանց հետ են քշութ բացահայտ հեղափոխականները»: Դժբախտաբար, առայժմ զեռ չափազանցություն և ասել, թե բացահայտ հեղափոխականները նրանց հետ են քշութ ինարկե, հեղափոխականներն աճում են:


Ս. Ա. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՊՀ ԱՊՀ ՊՈBLԱԿԱՆ ԲՈԼ
77/22 1922

յում, բայց զգբախտաբանելով բավական չափով գուրս շեն քշում այն վերաբերյալ, որունք թայց-մզ»-ի ասելով խելացի, միայն պատճենի կազմաթը իմաստությամբ և պատրիոտիզմով լեցուն քաղաքացեաներ են:

Ինչից և այս ասենք: Մեզ մոտ բանվոր դասակարգը շունի և վու ել ունեցել և բուրժուազիայի գովեստին արժանացած լիդերներ, նույնիսկ յեթե հրշելու լինենք, վոր մեզ մոտ վորոշ շրջանում մենշևիկներն ու հա-եռները փոքր գեր չխաղացին. վորդինեան մեր բուրժուազիան ամենաառուր ու վճռական մոմենտը մի կողմ թողած, յերր շատ նեղն եր ընկնում ընդհանուր առմամբ հա-եռներից ու մենշևիկներից ել անրավական եր: Իսկ այստեղ՝ Անգլիայում, ինչի արդյունք և բուրժուազիայի այդ բավականությունը բանվորական լիդերներից: Պարզ և, թե ինչի արդյունք և զա: չե վոր ինքը բուրժուազիան և զատիարակել այդ լիդերներին: Վորտեղից գտավ նա «գանվոր» լիդերներին զատիարակելու այդ հնարավորությունը: Հենց այստեղից, վոր նա ինքը հզոր եր ու կուտուրական, իրքեւ ամենաառջավոր կապիտալիստական յերկրի տիրող ու կառավարող դասակարգ: Հենց վոր բանվոր դասակարգն իր ուսերի վրա յեր բարձրացնում իր յերբասարդ լիդերներին՝ իսկույն և եթ անզիւխական բուրժուազիայի քաղաքական «ապեցները» նրանց վրա ելին ընկնում, զրավում եցին նրանց և նրանց յերեակայության վրա ազդում բուրժուազիան կուտուրայի զորությամբ: Մեզ մոտ միջին քաղեներն ինտելիգենտ-արքվատելը, ազտամիտը և նույն իսկ արմատականը, ի սկզբանե ան-

2942
2942

2942
2942



տի համարել են, վոր քանի Անգլիան ամենակուլուր բական յերկիրն ե, ապա ամեն ինչ, վոր Անգլիայումն ե ու Անգլիայից ե՝ առավելություն ե, բարիք ե, պրոգրես ե և այլն: Դրանով արտահայտվում ե դիալեկտիկորեն մտածելու, յերեսութներն անդամահատելու, խնդիրն իր պատմական կոնկրետությամբ քննելու մեջանական անկարողությունը: Անգլիական տեխնիկան, այդ իսկական բարիքը մենք ձգտում ենք մեր յերկիրը տեղափոխել ի փոխանակություն մեր հացի, փայտի և այլ արժեքավոր ապրանքների: Բայց Անգլիայի արքայական իշխանությունը, անգլիական փարիսեցիությունն ու պահպանողականությունը, կը բռնականությունը՝ այդ ամենը լաթ ե, դարերի աղբ ու անպետք թափթփուկ ե, վոր մեզ ձրի յել տան՝ չենք վերցնի (Ծափահարություն):

Յեթե մեր միջին տիպի քաղաքացու վրա յեր այդպես ազգում անգլիական կուլտուրան, նեռվից իսկ կույր պաշտամունքի գգացում առաջ բերելով, ապա առավել ևս կոնկրետ, ուժգին, անմիջական ե նրա ազգեցությունն Անգլիայի քաղքենու և անգլիական բանվոր զասակարգի կիսաքաղքինի ներկայացուցչի վրա: Այս, ինչ վոր անգլիական բուրժուազիան ե կարողացել ստեղծել՝ այդ նրա կուլտուրայի հիպնոզն ե: Յեկ ահա հենց այդ գարպետորեն կազմակերպված հիպնոզի զորությամբ նա ներգործում ե բանվոր լիդերներին, վորոնց նա միշտ ել իմացել ե շրջապատել իր բեղորդայրներով, լուսանկարիչներով, սպորտամեններով, տերտերներով ու դասախոսներով և այդպիսով ամեն մի նորելուկ լիդերի իր ձեռքի մեջ ե հա-

վաքել: Նա՝ այդ նորելուկ բանվոր լիդերը միանգամբ բուրժուական շրջապատի մեջ ե ընկնում:

Այդ շրջապատն աղջում ե որեցոր, շարթե շարթ, տարեցտարի: Յեկ հասարակական ասպարեզ վոտ գրած յերիտասարդ բանվոր լիդերն սկսում ե ամաչել վոր իր կիրակնորյա ոյնուրտուկը հարկ յեղածին չափ նորածն չե, նրա փափագը կիրակնորյա զրուանքի պատշաճ ցիլինդրն ե դառնում, իսկական ջենալմենից չտարբերվելու, հետ չմնալու համար: Այդ չնչին բան ե թվում, բայց սրանումն ե ամբողջ կյանքը: Յեկ ահա այդ կենցաղային հիպնոզը տիրող ու կառավարող, զորեղ, կուլտուրական, ազան, փարիսեցի և ստոր զասակարգի արվեստն ե հանդիսանում՝ արվեստ, վորի նպատակն ե ամենորյա ներգործությամբ մշակել, իրեն յենթարկել ամեն մեկին, վորը բանվոր զասակարգի ծոցից ե դուրս գալիս, ամեն մեկին, վորը բանվորական ընդհանուր մասսայից մի զլլով բարձր ե՝ լինի այդ մի զորդարանում, մի շրջանում, քաղաքում կամ ամբողջ յերկուում:

Յերելի ձեզնից շատերը տեսել են ու գիտեն, թե ինչ ե «Թայմզը»: Ամեն որ տասնյակ յերեսներ, սքանչելի, մանրագույն շրիփո, բաղմազան նկարներ, անթիվ բաժիններ, այնպես վոր այնտեղ ամեն ինչ իր տեղն ե գտնում, մեծ քաղաքականության խնդիրներից, յեկեղեցու և մողայի նորություններից սկսած մինչև սպորտի բոլոր տեսակները: Յեկ այդ ամենը ինչ տեսակետով: Իհարկե բուրժուազիայի շահերի պաշտպանության տեսակետով:

Անգլիայի բուրժուական մյուս թերթերն այդքան մեծ չեն, բայց նույն կտուուցվածքն ունեն. նը-

բանք զրագում են ընթերցողի ուշաղլությունն ամեն կողմից և նրան ծնկի բերելով պաշտել տալիս մեծ բրիտանական ազգային արագիցիան, այսինքն բուրժուալիսյան։ Իսկ բանվորական մամուլը շատ թույլ է, և բացի զրանից, կոմունիստական մամուլը հանաձ, ամբողջապես համակված է բուրժուական կուլտուրայի նույն այդ հիպոդրոֆ։ Այդ հիպոդրոֆի լրացումն անմիջական տերրորն է հանդիսանում։ Անզիփայում յեղեղի գնալը նույնն է, ինչ զոր մերկությունը շորով ծածկելը կամ մանրավաճառի հաշիվը վճարելը։ Միթե կարելի բան և փողոցում մերկ ման գալ։ Միթե կարելի յեղեղեցական համայնքի մեջ չլինի։ Առվորականից մեծ քաջություն է հարկավոր, վորպիսդի Անզիփայում հայտարարեն, թե յեղեղեցական համայնքի մեջ չես մանում, յեփս առավել՝ թե Աստծուն չես հավատում։ Բանվորական լիդերների դարավոր այդ կրթության արդյունք է հանդիսանում։ Մակրոնայլի այսպես կոչված բանվորական կառավարությունը։ Ահա այն պատճառը, թե ինչնուր վերջին հաշվով այնքան ուժեղ և անդիմական մենշելիզմը, իսկ կոմունիզմը՝ թույլ։

ԿՈՒՏՏՈՒՐԱՅԻ ՎԵՐԱՑԱԿԱՆ ՈՐԻՆԱԿ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Այժմ կրկնենք հարցը. ուրեմն ինչ, կոմունիզմի թուլությունն Անզիփայում յերկրի կուլտուրականության նշանն է, թե հետամնացության։ Մեր կատարած վերլուծությունից հետո այլեփս մենք վոչ մի չիմք չունինք նման մեխանիկորեն զրգած հարցի թակարդն ընկնելու։ Մենք կասենք, այդ միաժամա-

նակ և շատ վաղաժամ՝ զարգացման նշան և եմեծ հետամնացության, վորովհետեւ պատմությունը վոչ թե մեքենայորեն է զործում, այլ գիտելելուկորեն։ Նա յերկարատակեվ շրջանների բնթացքում զուգակցում է մի ասպարիզի առաջազեմ տեսքենցները մյուս շրջանի հրեշտավոր հետամնացության հետ։ Յեթե մենք համաշխարհային պատմական զարգացման տեսակետից համեմատենք Մակրոնայլի «բանվորական» կառավարությունը տաճիկ ազգային-բուրժուական կառավարության հետ, այդ դեպքում յեզրակացությունը վճռ հոգուտ Մակրոնայլի կը լինի։ Դուք հիշում եք, զոր Անզիփայի ազատական լիդեր «մեծ» Գլազուոնը՝ Մարքոս Նրան վողջ հոգով ատում եր՝ «մեծն» Գլազուոնը մի ժամանակ անեղ ձառ ուղղեց արյունոտ սուլթանի՝ մոլեանդ բարբարոս իսլամի ներկայացուցի գեմ։ Յեթե միջին տիպի քաղաքացու զիմեք ու հարցնեք՝ Անզիփան և Տաճկաստանը, նա անպայման կամի՝ գե ինարկե Անզիփան՝ քաղաքակրթություն և պրոցես և, Տաճկաստանը՝ հետամնացություն, բարբարոսություն։

Բայց տեսնք, թե ինչ կա։ Հիմա Անզիփայում մենշելիկների կառավարությունն է, Տաճկաստանում՝ ազգայնական-բուրժուական։ Յեկ ահա ազգայնական այդ կառավարությունը Տաճկաստանում ստիպված յեղավ խալիֆայությունը վերացնել։ Խալիֆատը պանխականիզմի, այսինքն աշխարհիս ամենահետազնու հոսանքներից մեկի կենտրոնական հաստատությունն է։ Իսկ Անզիփայի մենշելիկական կառավարությունը վերականգնում է խալիֆատը չեղազում՝ բուրժուական գիտակի իշխանությունը մուսուլման սարուկների շին-

քին հարատե դարձնելու համար: Պատմական յեղբակացությունն այն է, որ Անգլիայի մենշեվիկական կառավարությունը, չնայած բրիտանական ցիվիլիզացիան և այլ լավ բաներին, համաշխարհային ուժերի այս հյուսվածքի մեջ հետապիմական դեր է կատարում, մինչդեռ ազգովին ընկճած Տաճկաստանի ազգայնա-ըուրժուական կառավարությունը հառաջակեմ դեր է խաղում: Անա պատմության դիմեկտիկան: Բնականաբար, տեխնիկայի զարգացման տեսակետից Անգլիան անչափ գերազանցում է Տաճկաստանին: Անգլիայի կուտակված հարատություններն ինչքան առեւ գերազանց են Տաճկաստանի ունեցածից: Բայց ահա տեսեք. վոր հենց այդ հարատությունները և առհասարակ ազգային վորշ «կուլտուրան» պաշտպանելու համար անգլիական բուրժուազիան ստիպված է գերազանցորեն հետապիմական քաղաքականություն վարել, ըստ վորում, բանվորական կառավարությունը նրա ձեռքում խալիքատը վերականգնելու դենք է դառնում:

Կուլտուրականության վերացական արժին չկա, վոր կյանքի բոլոր ասպարեզների համար պետք գու: Գետք և վերցնել կենդանի փաստեր և այն ել նրանց պատմական կենդանի փոխազդեցության պայմաններում: Յեթե յուրացնենք հարցին մոտենալու դիմուկտիկական այս տեսակետը, այն ժամանակ մեզ շատ բան պարզ կը լինի: Գերմանիան, որինակ, զուրշե, վոր կոմունիստական կուսակցության ու սոցիալ-դեմոկրատիայի ուժերի հարաբերության տեսակետից Թուսաստանի և Անգլիայի միջի տեղն է զբավում: Հասկանալի յի, վոր անհրաժեշտ և տարկա-

յորեն, կոնկրետ ձեռք ուսումնասիրել ամեն մի յերկրի պատմությունը, վորպեսզի հնարավոր լինի կոմունիստական շարժման արտգ կամ գանդաղ զարդացման պատճառները պարզել: Ընդհանրապես, այնուամենայնիվ, կարելի յի այս յեղբակացությանը հանգել: Պրոլետարիատն ավելի հեշտ և զբավում իշխանությունն այն յերկրներում, (ինչպես մեր յերկրն ե), վորոնք ավելի ուշ են կապիտալիզմի ճանապարհը դուրս յեկել, ավելի հեշտ, քան նախապես բուրժուական մեծ պատմություն և ավելի բարձր կուլտուրա ունեցող յերկրներում: Բայց այս հարցի մի կողմն է միայն: Յերկրորդ և վոչ պակաս կարենը յեղբակացությունն ասում ե՝ իշխանությունը զբավելուց հետո սոցիալիստական շինարարությունը համեմատարար բարձր կապիտալիստական կուլտուրայի յերկրներում ավելի հեշտ և լինելու, քան տնտեսապես հետամնաց յերկրներում, ինչպիսին մերն ե: Այդ նշանակում է, թե անգլիական բանվորին խական պլուտուարական իշխանություն՝ զիկատառուրա ձեռք ձգելն անհամեմատ ավելի զժվար և լինելու, քան մեղ մոտ յեղանց: Բայց իշխանություն ձեռք ձգելուց հետո անգլիացի բանվորն ավելի արագ և ավելի հեշտ կը մոտենա սոցիալիզմին, քան մենք ենք զնում: Յեթ գեռ հայտնի յել չե, գեռ ևս պատմությունը վճռուկանապես չի ասել, թե ով շուտ սոցիալիզմ կը ստեղծի՝ մենք, թե անգլիացիք: Յեթե այսպիս մոտ 10 տարուց, (վոչ թե մարզարեցանում եմ, այլ որինակի համար թվարանական հաշվ եմ անում), յեթե 10 տարուց հետո անգլիացի բանվորը իշխանությունն իր ձեռքը վերցնի, հետա-

գա 10 տարուց հետո նա իսկական սոցիալիստական տնտեսություն կունենա, շատ բարձր տնտեսություն, իսկ մենք 20 տարուց հետո, յերեխ, վոչ միայն Յակուտի նահանգում, այլ և ավելի մոտիկ տեղերում գյուղացիական հետամնացության շատ ու շատ մնացորդներ կունենանք:

Մեր Հարավի ու մեր Հյուսիսը—մեր գեռ ևս նոսք բնակչությունն ի նկատի առնելով—բարձր տեխնիկայի վրա հիմնված կենտրոնացած սոցիալիստական տնտեսություն դարձնելու համար՝ տասնամյակներ են հարկավոր: Յեզ մեկ ել տեսար՝ մի 20 կամ 25 տարուց հետո անգլիացի բանվորը հետ նայելով մեզ կասիր «Զնեղանաք, յես մի փոքր ձեզ նից առաջ անցա»: Մենք ի հարկեն չենք նեղանա, այսինքն մեղանից նրանք, վորոնք կը հասնեն այդ որին: Մեղսից առաջ անցեք, մեզ ձեր հետեւ թողեք, արեք այդ շնորհը, անգլիացի բանվոր ընկերներ, ինչպում ենք, առաջ անցեք, վաղուց ենք ազատում (ծիծաղ):

Այդպես և պատմության դիալեկտիկան: Քաղաքականությունն ուշացնում է, քաղաքականությունը կարծես շղթայել և անգլիական բանվորին, և նու առաջ և գնում մի տեսակ վախկոտ, վարանոտ, խղճուկ մակդոնալդյան քայլիկներով: Բայց յերբ նա աղատագրվի քաղաքական կապանքներից, այն ժամանակ անգլիական նժոյյը մեր գյուղացիական վտիտ ձիուկից շատ առաջ կանցնի:

Իս ասած տեսական հայտարարի ընթելու, սովորական մարքսիստական տերմիններով ձեւկերպելու համար պիտի ասեմ, վոր հարցն այն ե, թե ինչ փոխ-

հարաբերություն կա հիմքի և վերնաշենքի և ինչ փոխադրեցություն՝ տարբեր յերկրների հիմքերի ու վերնաշենքերի միջև: Մենք զիտենք, վոր վերնաշենքերը՝ պետությունը, իրավունքը, քաղաղաքականությունը, կուսակցությունները և այլն՝ տնտեսական հիմքի վրա յեն առում, նրանով մնվում են, նրանով ել վորաշվում: Հետեւաբար՝ վերնաշենքի և հիմքի միջև համապատասխանություն պիտի գոյություն ունենա: Այդ իրոք գոյություն ունի, միայն վահ թե պարզ, այլ բարդ ձեռվ: Վերնաշենքերից մեկի (ըստը ժուարկան պետության, բուրժուական կուսակցությունների, բուրժուական կուլտուրայի) ուժգին զարգացումը յերբեմն յերկար ժամանակով հետաձգում և մյուս վերնաշենքերի (հեղափոխական-պրոլետարական կուսակցության) զարգանալը, բայց վերջին հաշվով—ձիւա վերջին հաշվով և վոչ թե անմիջականորեն—հիմքը հանգես և գալիս, իրեն վճռող ուժ: Մենք այդ եր, վոր ցույց տվինք Անգլիայի որինակով: Յեթե հարցին ձևականորեն մոտենալու լինենք, կարող ե թվալ, թե անգլիական կոմունիստական կուսակցության թուլությունը հակասում է հիմքի և վերնաշենքի համապատասխանության մարքսիստական որինքին: Բայց այդ ի հարկե այդպես չե: Դիալեկտիկորեն՝ հիմքը, ինչպես մենք տեսանք, միշտ ել ապահովում է իր հաղթանակը: Ուրիշ խոսքով՝ բարձր տեխնիկան, նույնիսկ գերահագանողական քաղաքական կապանքները ջարգելով կը հայտնարերի իր գերակշռությունը և սոցիալիզմին կը մոտեցնի ավելի վաղ, քան տեխնիկորեն ցածր յերկրներում:

Ահա, ընկերներ, այսպիս ևմ պատկերացնում յես

Սակոլնիկում ինձ տրված հարցի հիմնական պատասխանը:

4. ՖԱՇԻԶՄԻ ՅԵՎ ՌԵՖՈՐՄԻԶՄԻ

Կոմունիստական կուսակցությունների գորության և թուլության պատճական պատճառների մասին ընդհանուր այս դատողություններից հետո՝ այժմ անցնենք համաշխարհային քաղաքական կացությանը՝ բառիս ավելի անմիջական իմաստով, այնպես, ինչպես նա դասավորվել էր անմիջապես կոմինտերնի Նկոնդրեսից առաջ: Վերջին տարիներում մեր մամուլը քիչ չի խոսել այն մասին, վոր մենք ֆաշիզմից ըջանն ենք թևակոփել: Վոմանք այն կարծիքին ենին, թե ֆաշիզմն ե, վոր մոռեցնելու յե անմիջական հեղափոխությունը, բանվորների պատաժրությունը Յեվոպայում: Սակայն վերջերս ֆաշիզմ հասկացողությունը չափազանց ձգվել է ու լայնացել, չափազանց տարածական և գառել: Յեթե մի տեղ գործադրություն են ձերբակալում՝ հաճախ այդ հրամանում են իրեն ֆաշիստական ռեժիմի հաստատում, թեև գործադրություններին բուրժուազիան ֆաշիզմից առաջ ել ձերբակալում եր: Ընկերներ, արժե վոր մենք խորհենք այս մասին. Ի՞նչ և ֆաշիզմը: Ի՞նչով ե նա տարբերվում բուրժուական բնության «բնական» ռեժիմից: Այն ակնկալությունը, թե ֆաշիզմն ե, վոր անդադար սուր բնույթ ստանալով, պրոլետարիատին ապատամբության և մղելու, չարգարացավ, և պիտի առել, վոր մեղնից շատ շատերն այդպիսի ակնկալություններ չունեյին: Կարելի յե հիշատակել այս վոր մենք 1922 թ. մենք ասիթ ելինք ունեցել հայտնե-

լու, վոր յեթի գերմանական հեղափոխությունը բանվոր դասակարգին անմիջապես հաղթություն չըկրի, ապա մենք մոտակա տարիներում Անգլիայում բանվորական կառավարություն կը տեսնենք, իսկ Ֆրանսիայում՝ ձախակողմյան բլոկի հաղթություն: 1923 թ. Կոմինտերնի 4-րդ կոնգրեսում մենք կրկնել ենք նույն այդ միտաքը: Համապատասխան ուղղում մոցրվեց կոնգրեսի քաղաքական բանաձեռի մեջ: Անգլիայի, Հոլլանդիայի և այլ յերկրների ընկերներից մի քանիսը վիճում եյին գրա գեմ: Ի՞նչպես թե բանվորական կառավարություն Անգլիայում, ձախակողմյան բլոկի հաղթություն Ֆրանսիայում, ուրեմն սեփորմիզմի մի մի նմեր շըջան, նշանակում և հեղափոխությունը մշուշոտ հետուների գիրկն և անցնում և այլն: Ուրիշները մինչև այնտեղ հասան, վոր ինձ սեփորմիզական իլլյուզիաներ քարոզելու մեջ մեղադրեցին: Այդ ընկերները կարծում եյին, վոր յեթե սի բան, առարկայական զարգացման իմաստով նախատեսնես, զրանով իսկ զու պատասխանատու յես այն բանի համար, վորը լինելու յե: ուստի ավելի լավ և վոչինչ չնախատեսնել այլ ամեն ինչ քննել ու ամեն բանի մասին հետին թվով դատել... (ծափահարություն): Պիտի ասեմ, սակայն, վոր յերբ մենք վիճարանությունների ժամանակ փաստաբանում ելինք բանվորական կառավարության հավանականությունն Անգլիայում և ձախակողմյան բլոկի հաղթանակը Ֆրանսիայում՝ մենք միտայն զարգացման տեսնեցներն ի նկատի ունեցինք: Այդ չեր նշանակում, վոր մենք 100 տոկոսով համոզված եյինք, թե այդ հենց այդպիս ել կլինի: Այլ բան և զարգացման տեսն-

պահողական յերեսույթն է, և մեծ մտրակ ե հարկավոր նրան սթափեցնելու համար: Ի՞նչ և Փաշիզմը: Կարող ե արդյոք Փաշիզմն անորոշ, յերկար ժամանակ տևել: Փաշիզմը բուրժուազիայի մարտական կազմակերպությունն ե՝ ժամանակավոր յեզ բաղաբացիական կովի կարեթերեփ համար, Ահա թե ինչ և Փաշիզմը: Նա բուրժուազիայի համար նույն դերն ու նշանակությունն ունի, ինչ դեռ վոր կատարում ե և ունի զինված ապատամբության կազմակերպությունը պրոլետարիատի համար: Բանվոր դասակարգը զինված ապատամբության և պատրաստվում, վրա համապատասխան վերաբասավորում իր շարքերը, հարվածային հարյուրակին կազմակերպում, իր ուղղմիկներին զինամիտի ուժանակներով զինուում: ևայլն: Կարող ե արդյոք այդ վրությունն ընդմիշտ շարունակվել:

Պարզ է՝ չի կարող կամ բանվոր դասակարգը կը հալիթի, և այդ գեպքում կանոնավոր բանակ կը ստեղծի, կամ նրա գրոհը հետ կմզվի, և այդ գեպքում, զինված ապատամբության կազմակերպությունը՝ թեկուղ ժամանակավորապես՝ ի շիք կը դառնա:

Նորից ծայր և առնում քաղաքական ազիտացիայի, ուժերի կուտակման շրջանը, վորը մի վորոշ ժամանակ և տեկում և հետո միայն մի քանի տարուց (1905 թ. հետո), իսկ յերբեմն տասնյակ տարիներից հետո (Փարիզի կոմունայից հետո) նոր զինված ապատամբություն և պատրաստվում: Մենք արգեն ասացինք, վոր Փաշիզմը բուրժուազիայի ամիջական հարվածային զինվորական մարտական կազմակերպությունն ե, յերբ բուրժուազիային բավական չի մնում որինականությամբ ու դեմոկրատիայով սահ-

մանափակված պետական հին ապարատը, յերբ նա ամեն կողմից սեղմող պրոլետարիատից ուժի գոռով պաշտպանվելու, նրա հարվածները հետ մղելու կարիք և զգում այն ժամանակ նա սանձարձակ սպիտակ բանդաներ ե կազմակերպում, վոր ամեն ինչի պատրաստ ին և ընդունակի վունակով և անուու իր որինականությունը, իր գեմոկրատիան, միայն թե իր տիրապետությունը պահպանուի կարող ե արդյոք Փաշիզմը յերկար տեկվել: Վճչ: Յեթե բուրժուազիան մնա իշխանության դիրքերում, ինչպես այդ իտալիայում 1920 թ. յեղավ, իսկ Գերմանիայում՝ անցյալ տարի, այդ ժամանակ՝ ողտագործելով Փաշիզմի արցունավ աշխատանքը, կը ջանա լայնացնել իր հենարանը, միջին և մանը բուրժուազիայի վրա հենվել և նորից վերականգնել որինականությունը: Յերկար ալլրել Փաշիզմի պայմաններում բուրժուազիան չի կարող ինչպես և պրոլետարիատը չի կարող տարիներով զինված ապատամբի գրության մեջ մնալ: Մենք տեսնում ենք, վոր իտալիայում Մուսոլինին վերջին ամիսներս ջղաձիգ փորձեր ե անում, վորպեսզի Փաշիստական իշխանությունն, այսինքն անլեգալ մարտական ապարատը, պարլամենտարիզմի լեգալ մեխանիզմին հարմարեցնի: Վորոշ հաջողություն նունի, բայց ընդդիմագրությունն ավելի արագ և աճում, քան Մուսոլինիի հաջողությունները: Մանավանդ վոր նրան չի հաջողվել իր կարիքներին կարգապահության յենթարկել, և մենք տեսնում ենք սոցիալ դեմոկրատ Մատաֆրատիյի սպանությունը: Իտալիայի նույնիսկ բուրժուական զասակարգի մեծամասնությունը գեմ և այդ սպանության: Պրոլե-

տարական հեղափոխությունը չի սպառնում, վորպես
անմիջական վտանգ, ուստի և որինականության հիմ-
քերի խախտումն ու ցնցումը՝ պարլամենտի անդամ-
ների սպանության միջոցով՝ բուրժուազիային վոչ-
միայն պետք չե, այլ և վտանգավոր եւ Այդ ավելորդ
շառայլություն եւ:

ԹԵՖՈՐՄԻԶՄԻ ՇԱՆՍԵՐԸ

ՅԵթե Փաշիզմի նկատմամբ այսպիսի կոնկրետ-
պատմական վերաբերմունք յուրացնենք, այն ժամա-
նակ հասկանալի կը դառնա, թե ինչու գերմանական
բուրժուազիան վորն ինքն իր չտապալվելու վրա զար-
մանում ե՝— կամնում և ռեակցիան պարլամենտա-
րիստական հունի մեջ զնել, հասկանալի կը լինի թե
ինչու Անգլիայում կոնսերվատորներից հետո յեկան
իշխելու վոչ թե «Փաշիստներն», այլ Մակրոնայզի
բանվորական կառավարությունը. ինչու Ֆրանսիայում
իշխանության գլուխ ձախակողմյան բլոկն անցավ,
ինչու Իտալիայում Փաշիզմը սուր տագնապի մեջ և,
չնայած առաջնորդները նրան պարլամենտարիզմին-
հարմարցնել են կամնում: Մենք կհասկանանք նմա-
նապես, թե ինչու յերկու տարի առաջ կարելի յեր-
նախատեսել այդ, և գուշակել այն, ինչ վոր այսոր-
իրոք տեղի յե ունենում:

Այդ կարելի յեր անել, վորովհետեւ պրոլետա-
րիստի և բուրժուազիայի դասակարգային պայքարը-
զարգանում և և ընթանում վոչ թե ուղիղ գծով, այլ
իրար հետեւող սուր բաղխումներով, վորոնք ընդմիջ-
ում են «խաղաղ» կավի տարբեր տեսլության շրջան-
ներով: ՅԵթե այդ այդպես չլիներ, ապա կապիտալիս-

տական հասարակակարգ առհասարակ գոյություն ու-
նենալ չեր կարող: Քաղաքացիական պատերազմի այդ-
պիսի սուր բաղխումներ տեղի ունեցան իտալիայում 1920թ., սեպտեմբերին, Գերմանիայում՝ 1918 և 1919
թ. թ., 1921 մարտ ամսում և անցյալ տարի: Գերմա-
նիան տռացին եր հեղափոխություն սպասող յերկըր-
ների շարքում և մենք ասում եյինք. կամ այս նոր
բաղխումը բուրժուազիայի հետ պրոլետարիատի հաղ-
թանակով կը պատկի, և այդ գեղքում Փաշիզմի բա-
նը բուրդ կը լինի, կամ նա պարտությամբ կը վեր-
ջանա՝ այն ժամանակ հեղափոխությունը յերկար ժա-
մանակով հետ կը շպրտվի, բուրժուազիան ստիպված
կը լինի նոր և ավելի լայն հենարան փնտրել և կը
հարկադրվի առաջարկել սոցիալ-զեմոկրատիային լիդեր
այն վերքերը, վոր Փաշիզմն և պատճառել քաղաքա-
ցիական կովում: Հիմա ամբողջ Յեփրոպայում մենշ-
վիկները հենց այդ զործով են զբաղված: Իմպերիու-
մատական պատերազմի, վիթխարի ցնցումների, չը
տեսնված գործադուլների, հեղափոխական բաղխում
ների, ապատամբությունների շրջանը վերջանալուց
հետո, յերբ այդ ամենը բավական չեղավ պրոլետա-
րիստի հաղթանակն ապահովելու համար, և բանվոր
զասակարգը ժամանակավորապես հետ նահանջեց ա-
ռաջավոր գիրքերից՝ այն ժամանակ բուրժուազիան
բացի տնտեսականից, սկսեց նաև քաղաքական կա-
յունություն փնտրել, և այդ նպատակով սկսեց
միջին և մանք բուրժուազիայի վրա հենվել: Նա ոդ-
նության և կանչում վոչ թե Փաշիստին, այլ մեն-
շերիկին, և ասում նրան, «Սըրբիր արյան բծերը, սփո-
փանքի սպեղանի դիր վերքերին, հանգստացրու, խա-

րիր, զեմուկը աստիայի գույնողույն վոստայնով ցանցեր քանվոր դասակարգին: Հետևաբար այս փոփոխությունը պատահական չէ, այլ որինաշափ, բնական, ուստի և կարելի յեր նախատեսել այն շատ առաջ, քան փաստը կատարվեց: Մարքսիզմը հենց նրա համար ել արված ե մեր ձեռքը, վորպեսզի խելամռւտ լինենք պատմական զարգացման ընթացքին և զեթ մասամբ նախատեսենք գալիք ո՞ւ առանց գրան չի կարելի կրովել և հաղթել:

Այսպես ուրիմն, յերոպական, իսկ մասամբ և համաշխարհային պատմության նոր-ըրեփորմիստական և նոր պացիֆիստական շրջանը միանգամայն պատճառաբանված ե, որինաշափ ու բնական: Բայց արդյոք այդ նշանակում ե, թե նա շատ յերկարատե և լինելու Յեվ հետո՝ այդ ավելի կարեվոր ե՝ արդյոք այդ նշանակում ե, թե բուրժուազիան կապիտալիստական կայուն ռեժիմը վերջնականապես վերհաստատելու շեմքին և կանգնած: Վոչ, դրա մասին խոսել ու կարիք իսկաւ Քաղաքական վերնաշենքում տեղի ունեցող պրոցեսները՝ հայած իրենց լիակատար որինաշափուրյանը, այնուամենայնիվ ավելի տատանվող մակերեսուրային բնույթ ունենալու սետեսական հիմքի պրոցեսները, իսկ այսաեղ դեռ միանգամայն անհնարին և ծատել յերեռութներ, վորոնք իբրև ապացույց կարողանային ծառայել թե Յերոպայի և ամբողջ աշխարհի կապիտալիստական տնտեսությունը տատանվող նոր հավասարակշռություն գտնելու վրա յե:

Իմպերիալիստական մեծ պատերազմը առաջ յեկավ նրանից, վոր կապիտալիզմի արտագրական ուժերը չեյին կարողանում ազգային պետականության

առհմաններում տեղավորվել, Միիհարթիզմն իր միջոցներով պիտի լայնացներ ամեն մի պատերազմող կողմի շուկան ի հաշիվ մյուս կողմի: Սակայն պատերազմը չլուծեց այդ ինդիբը: Արտազրական ուժերի համար վերսալի խաղաղությամբ ու համաշխարհային ուժերի նոր փոխհարաբերությամբ ստեղծված շըրջանակները ավելի նեղ են քան պատերազմից առաջ:

Դրանից ե բղխում կապիտալիզմի խոր, տեսական, քրոնիկական կրիզիսը: Կոմինտերնի Յ-րդ կոնդրեսում մենք վիճում եյինք՝ արդյոք հետպատերազմյան Յեվրոպայում տեղի պիտի ունենան շուկայի կոնյուկտուրային տատանումներ (վերելք, անկում, կրիզիս և այլն): Մենք այնտեղ ապացուցում եյինք, վոր նման տատանումներն անխուսափելի յեն, քանի կառ ու մնում ե հասարակության կապիտալիստական հիմքը: Վիճելի հարցի եյությունը հետևյալն եր՝ կարելի յե և պիտի սպասել արդյոք, վոր կրիզիսն անընդհատ գծով վայր իջնի, թե պիտի յենթագրել, վոր կապիտալիզմի վիլուգման պայմաններում իսկ փոքր ցիկլային տատանումներ տեղի կրնենան:

Այժմ անվիճելի յե այդ մասնակի տատանումների խոչըրագույն նշանակությունը հետպատերազմյան շրջանի պրոլետարական շարժման համար: Մոտակա շրջանի համար և կոնյուկտուրայի այդ մասնակի տատանումների նշանակությունը վոչ մի գեպում պակաս չի լինելու:

Սակայն միենույն ժամանակ կոնյուկտուրայի ժամանակավոր բարելավումը մագաչափ իսկ չի պարապուեցնում մեղ խոստովանել, վոր իբր թե յեվրո-

պական կապիտալիզմի կրիզիսն անցել է: Այդպիսի խոստովանքությունից մեզ հեռու յեն պահում 3-րդ կոնգրեսի տեսականորեն ուղիղ թեզիսները:

Սյստես, որինակ, անցյալ տարվա առևտրա-արդյունաբերական բարձր վերելքն Ամերիկայում, գործադրկության վորոշ չափով նվազելն Անգլիայում, ֆրանսիական արդյունաբերության վորոշ աճումը, գերմանական, ավստրիական ու լինական վայրուտաների ծանոթ կայունացումը և մի շարք այլ փաստեր, տեսական ճշմարիտ ուղեցույց չունենալու գեղագում, մեզ սիսալ ուժորմիստական յեղբակացություններ անել պիտի տային: Կրիզիսի մեջնայական ըմբռնումի գեմ մղվող կոփը հիմնված եր վոչ թե ոռփորմիզմին այս կամ այն զիջումն անելու ցանկության վրա, այլ ընդհակառակը, հեղափոխական լայն հեռանկարներից եր բղիքում և տեսականորեն ապահովագրում եր մեզ յերկրորդ կարգի տնտեսական ազդակները սիսալ արժեքափորելու վտանգից: Մենք բնալ մատգիր չենք չենդերսոնին և ընկ, ընդառաջ գնալու այն հարցում, վոր իրը թե կապիտալիզմի հիմնական հավասարակըշուությունը վերահստատվել է, և զրա հետևանքով բուրժուական հասարակությունն իր բնական հունն և մտել այդպիսի գնահատության և վոչ մի հիմք չկա, և նման մի միտքն ել բարեհավատ ցանկության արդասիք է: Կոնյուկտուրային տակտրա-արդյունաբերական տատանումները չեն վերացնում հիմնական հակասությունը՝ արտադրական ուժերի և նրանց ոգտագործման պետական սահմանների միջև: Անմիջապես այդ հակասությունից ծագեց իմպերիալիստական պատերազմը: Պատերազմի առիթը 1913 թ. կոնյուկտու-

րային կրիզիսն եր հանդիսացել: Պետք է խիստ տարբերություն գնել հիմնական ազգակների ներգործության ու կապիտալիստական զարգացման տենդենցների միջև միջև և կոնյուկտուրային տատանումների մյուս կողմից: 1913թ. կոնյուկտուրային կրիզիսը մեն մենակ չեր կարող պատերազմ առաջ բերել յեթե վերե հիշված հիմնական անհանդուրժելի հակասությունը գոյություն չունենար: Սակայն այդ հակասությունը պատերազմից հետո վոչ թե մեղմացավ, այլ խորացավ ու սրվեց: Մրանից արդեն պարզ է, վոր հեքթական փոքր վերելքն անկարող և վերացնել հիմնական հակասությունը և հետևապես անկարող և բուրժուական հասարակակարգի տնտեսական հավասարակշռությունը վերահստատել: Նրա հիմքերի հիմքը՝ եկոնոմիկան հետագայում ևս սպառնում և խորագույն պատերազմական և սոցիալական ցնցումներ ծնել:

6. ԳԵՐՄԱՆԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

Հիմա ամբողջ հարցն այն է, թե կոմունիստական կուսակցությունը կը կարողանա արդյոք ոգտագործել այդ ցնցումները, վորպեսզի իշխանությունը գրավելուց հետո կոպիտալիստական հասարակակարգի բոլոր հակասությունները լուծի և վերացնի: Յերբ հարց արվի՝ արդյոք անցած այս շրջանում մենք իրը կոմունիստական ինտերնացիոնալ, ուժեղացել ենք՝ մենք, պիտի պատասխանենք, վոր այս, իրրե ամբողջություն, մենք անպայման ուժեղացել ենք: Համարյա բոլոր սեկցիաներն ավելի ամուր են հիմա, ավելի հեղինակագոր ու ազդեցիկ, քան մի աարի տառած: Նշա-

նակում ե արդյոք այդ վոր նրանց ուժն աճում է ու պիտի աճի անընդհատ։ Այդ ուժն ու զորությունն աճում է ալիքաձև, ջղածգումներով՝ այստեղ ել զարդացման դիալեկտիկան և գործում, նրանցից Կոմինտերնն ել ազատ չե։ Որինակ անցյալ տարվա յերկրորդ կիսում, Գերմանիայի կոմունիստական կուսակցությունն անհամեմատ ուժեղ եր, քան այսոր, այն ժամանակ նա անմիջապես իշխանություն զբավելու յեր գնում և Գերմանիայի հասարակութան կյանքն այնպես եր ցնցվել, վոր վոչ միայն բանվոր դասակարգի ամենահետամնաց զանգվածները, այլ և գյուղացիության, մանր բուրժուազիայի, ինտելիցիանցիայի լայն շրջանները՝ սրանք բոլորն ել սպասում եյին, վոր ահա կոմունիստներն իշխանությունն կը վերցնեն և հասարակությունը կը վերակառուցնեն։ Այդպիսի արամադրություններն արգեն լավագույն և ամենահուսատու ապացույցներն են, վոր հեղափոխական դրությունը հասունացել իւ Բայց յեղավ այնպես, վոր կոմունիստներն իշխանությունը վերցնել չը կարողացան, ի վիճակի չեղան։ Վոչ թե այն պատճառվ, վոր որյեկտիվ հանգամանքները թույլ չը տվին նրանց այդ անել—վոչ, իշխանությունը զրավելու համար զրանից ել հասունացած, զրանից ել ավելի նախապատրաստված, պատրաստված պայմտներ չի կարելի պատկերացնել։ Յերբ այդ պայմաններն իսկությամբ նկարագրվեն՝ նրանց ուղղակի պրոլետարական հեղափոխության ձեռնարկ-գասագրքերի մեջ կարելի յե մտցնել, իբրև կատարելության դասական որինակ։ Բայց կուսակցությունը չկարողացավ ոգտագործել այդ։ Այս խնդրի վրա հարկավոր և ծանրանալ:

Իստերնացիոնալի առաջին շրջանը 1917 թ. հոկտեմբերից մինչև Գերմանիայի հեղափոխական ցընտրումներն եւ 1921 թ. մարտ ամիսը։ Ամեն ինչ վորոշությը պատերազմն է ու նրա անմիջական հետևանքները։ Կոմունիստները յեվրոպական պրոլետարիատի մատալուա ապատամբությանը և իշխանության գրավմանն են սպասում։ Վերն եր նրանց սիալը։ Նրանք թերագնահատում եյին կուսակցության նշանակությունը։ Յորդ կոնգրեսից հետո նոր շրջան և բացվում «Դեպի մասսաները» լոգունգը եյալես նշանակում և «Կուսակցություն կառուցիր»։ Գերմանիայում եր, վոր «Քաղաքականությունն ամենից լրիվ կերպով և այդ քաղաքականությունն ամենից լրիվ յերկրությունը տարգեց։ Սակայն հենց այդ յերկրությունը եւ նա հակասության մեջ մտավ 1923 թ. ստեղծված ել ամենահուսատու ապահովագրական արգեն լավագայուն անվանական հավասարակշռությունը մի հարվածով վերացրած Ռուբրի ոկտոպացիայի հետևանքն եր։

1923 թ. վերջին՝ կոմունիստները Գերմանիայում մեծապույն պարտություն կրեցին, վոչ պակաս, քան մեր պարտությունը 1905 թ.։ Սակայն վերն և այս յերկուսի տարրերությունը։ 1905 թ. մեր ուժերը պակաս եյին, զա պարզվեց կովի ժամանակ։ Ուրիշ խոսքով պարտության պատճառն ուժերի որյեկտիվ փոխհարաբերությունն եր։ 1923 թ. Գերմանիայում կոմունիստները պարտություն կրեցին, վորովհետև ըսնը ուժերի բաղիման չհասցըին, ուժերը զորակոչի չենթարկեցին և չոգտագրութեցին։ Այսպիսով այստեղ պարտության անմիջական պատճառը կուսակցության զեկավարությունն եր։ Ճիշտ ի, կարել ի յե ասել, վոր յեթե կուսակցությունը նույնիսկ ուղիղ քաղաքա-

կանություն վարեր՝ այնուամենայնիվ չպիտի կարողանար բավականաչափ ուժ հավաքել և պիտի ջարդվեր: Սակայն այդպիսի պնդում առնվազը թեական է: Որյեկտիվ կացությունը, դասակարգային ուժերի փոխարաբերությունը, աիրող դասակարգերի և ժողովրդական մասսաների ինքնազգացողությունը՝ այս ամենն ամենանպատառվոր պայմաններ ենին հեղափոխության հոմար: ազգային-պետական գոյության կրիզս, անտեսության և հետեվապես ֆինանսական կրիզս, պարլամենտարիզմի կրիզս, տիրող դասակարգերի ինքնազմանության լիակատար կորուստ, սոցիալ-դեմոկրատիայի և պրոֆեսիոնալ միությունների քայլայում, կրմունխուսական կուսակցության ազգեցության տարրերային աճում, մասն բուրժուական տարրերի թեքում զեափի կոմունիզմը, Փաշիստների տրամադրության անկում: Ահա քաղաքական հախալայմանները: Ի՞նչ ենք նկատում զինվորական ասպարեզում: Շատ չնշին մշտական զորք: Հազարյիրկու հազար զինվոր, այսինքն ըստ եյության զորքի ձերվով կազմակերպված գոստիկանություն: Թաշիստների զինված ուժերի քանակ հրեշտավոր չափազանցությունների եյին հասցնում, բայց նրանք մեծ մասսամբ թղթի վրա եյին: Համենայն դեպս հուլիսից և սկսուսից հետո ֆաշիստները խիստ բարոյալքված եյին: Աշխատավոր դանդվածների մեծագույն մասը զնում եր արդյոք կոմունիստների հետեւից: Այս հարցին չի կարելի միայն թվերով պատասխանել: Հարցը լուծողը հեղափոխության դինամիկան է: Մասսաներն անընդհատ կոմունիստական կուսակցության մեջ եյին հոսում: Հակառակորդները թուլանում եյին,

առյունչափ անընդհատ: Սոցիալ-գենոկրատիայի շարքերում մնացած մասսաները կոմունիստների դեմ ուղղված ակտիվ պայքար մզելու վահա մի պատրաստակամությունը ցույց չեցին տալիս, ինչպես այդ 1921թ. արարտները: Ըստհակառակը, սոցիալ-գենոկրատ բանվորների մեծամասությունը մեծ հույսերով հեղաշրջման եր սպասում: Այս այն է, ինչ վոր պետք է:

Մասսաներն ունեյին արդյոք մարտական արամագրություն: 1923 թ. վողձ պատմությունն այդ կողմանից մից մու մի կասկածի տեղիք չի թույնում: Ճիշտ է, տարվա վերջին այդ տրամադրությունն ավելի զուսպ, ներամփոփ դառավ, և այլևս մշտական արերացին պառաթկումներ տեղի չեցին ունենում: Սակայն ուրիշ ինչ լիներ: Տարվա յերկրորդ կեսերին մասսան ավելի փորձառու զարձավ, և զգաց կամ հասկացավ, վոր արդեն համել և ժամը ինպիրն ամբողջ ծավալով արդեն համել և ամուսնություններում մասսան հեղափոխութելու: Այդպիսի պայմաններում մասսան ավելի խորական գործի կարող եր անցնել միայն այն գեղակամական գործի կարող եր մասսան այդ ըություն լիներ և մյուս կողմից ինքը մասսան այդ ըություն հավատ ընծայեր: Այն խոսակցութեկավարության հավատ ընծայեր: Այս խոսակցությունները, վոր իրը թե մասսաները մարտական թյունները, վոր իրը թե մասսաները մարտական տրամադրություն չեն ունեցել չափազանց սուբյեկտիվ ընույթ ունեն և ըստ եյության կուսակցության վերին զեկավար շերտի անհաստատակամությունն են արտահայտում:

Մեկ մոտ ել հոկտեմբերի նախորյակին մեկից ավելի անգամ ասողներ են յեղել, վոր մասսաները մարտական, հարձակողական արամագրություն չունեն: Ենինը դրանց մոտավորապես այսպիսի եր

պատասխանել. «յեթե նույնիսկ յենթագրենք, վոր այդ ցուցմունքները ճիշտ են, ապա դա միայն մի բան պիտի վկայեր, վոր մենք ամենահարժար վայրկանը արգեն բաց ենք թողել: Սակայն դա յերբեք չեր նշանակի, վոր իշխանության գրագումն այժմ իսկ հնարավոր չի: Զե՞զ վոր վոչ վոք չի համարձակվի պնդել, թե բանվորական մասսաների մեծամասնությունը կամ նույնիսկ նշանակալի փոքրամասնությունը հեղաշրջման գեմ դուրս կը գան: Ամենաշատը, վոր նրանք ուղղում են ասել, դա այն ե, վոր մեծամասնությունը հեղաշրջման ակտիվ չի մասնակցի: Բայց բավական ե, յեթե ապստամբությանը մասնակցի ակտիվ փոքրամասնությունը, իսկ մեծամասնությունը բարյացակամ, սպասողական և կամ պասսիվ վերաբերմունք ցույց տա: Այսպես եր պատառարանում կենինը: Հետագայի դեպքերը ցույց տվին, վոր մարտական փոքրամասնությունն իր յետից և առնում աշխատավորների ճնշող մեծամասնությունը: Վո՞չ մի կասկած, վոր Գերմանիայում գեղքերը նույն ընթացքը կունենային:

Ապա ուրեմն վո՞րն և գերմանական կոմունիստական կուսակցության պարտության հիմնական պատճառը:

Հիմնական պատճառն այն ե, վոր նա իր ժամանակին չհասկացագ հեղափոխական կրիզիսը, վոր վրա եր հասնում Ռուբի ոկուպացիայից հետո և հատկապես պասսիվ գիմադրությունը դադարելու վայրկանից (1923 թ. հունվար-հունիս ամիսները): Նու ձեռքից բաց թողեց ժամանակը... Հեղափոխական կուսակցության համար ամենագեղքարը՝ հաճախ

բիներ տեսող ագիտացիոն և քարոզչական աշխատանքից զինված ապատամբության միջոցով իշխանությունը զբավելու համար մղվող կավի անցնելն ե: Գործունեցության այս սուր փոփոխությունը, բեկումը անխուսափելիորեն կրիզիս և առաջ բերում կուսակցության ներսում: Դրան պատրաստ պիտի լինի ամեն: Մի պատասխանատու կոմունիստ: Պատրաստվելու միջոցներից մեկը հոկտեմբերյան հեղաշրջման փաստական պատությունը ուսումնասիրելն ե: Մինչև այժմ կամ պատարիզում շատ քիչ բան և արգած գերայական կոմկուսակցությունը շատ քիչ ոգտագործեց հոկտեմբերի փորձը... Ռուբի կրիզիսը վրա հասնեց հետո ել նա շարունակեց իր ագիտացիոն և պրոպագանդիստական գործունեցությունը՝ միասնական ֆրոնտի բանաձեկվ կրտառելու վոգով, նույն թափով նույն ձեվերով, ինչպես վոր մինչև կրիզիսի հասուն նույն ձեվերով: Մինչդեռ այդ տակտիկան արդեն ներ արգում: Մինչդեռ այս տակտիկան արդեն անտեղի եր ու անբավարար, կուսակարմատապես անտեղի եր ու անբավարար, կուսակարմատիկորեն շարունակվում եր: Հարկավոր եր տիկական սուր շրջադարձ կատարել: Հարկավոր եր մասնակին և առաջին հերթին սեփական կուսակցությանը ցույց տալ, վոր այս անգամ բանն արդեն թյանը ցույց տալ, վոր այս անգամ բանն արդեն թիվանությունը զբավելու համար անմիջապես պատրիկանությունը գրավելու համար անմիջապես պատրիկանություն և հասել: Հարկավոր եր ամբողջ կազմարասավելուն և հասել: Հարկավոր եր ամբողջ կազմարասավելունը ֆարբեկա-գործարանային բջիջները կրպությունը Հարկավոր եր բջիջներ կազմակերպել տեղափոխել: Հարկավոր եր բջիջներ կերպով գըցյերկաթուղու վրա: Հարկավոր եր կտրուկ կերպով գըցյերկաթուղու վրա: Հարկավոր եր կտրուկ կերպով գըցյերկաթուղու վրա: Մասնավորապես ներ բանակում գործելու խնդիրը: Մասնավորապես հարկավոր եր միասնական ճակատի տակտիկան ամհարկավոր եր

բողջովին հարմարեցնել այդ խնդիրներին, տալ նրան ավելի վճռական և հաստատակամ ու ավելի հեղափոխական ընույթ:

Սակայն ամենից զլխավորն այն եր, վոր անհրաժեշտ եր իր ժամանակին ապահովել վճռական տակտիկան շրջադարձը իշխանությունը զրավելու ուղղությամբ: Դա չարվեց: Դա յէ զլխավոր և որհասական թերացումը: Դրանից ե առաջ գալիս հիմնական հակառակությունը: Մի կողմից կուսակցությունը սպասում եր հեղափոխության, իսկ մյուս կողմից մարտյան դեպքերում ձեռներն այրված լինելով, նա մինչեվ 1923 թ. վերջին ամիսները մերժում եր հեղափոխություն կազմակերպելու, այսինքն ապստամբություն կազմակերպելու միտքը: Կուսակցության քաղաքականությունը լիազար ժամանակի թափով եր ընթանում, մինչդեռ հանգույցի լուծման ժամը վրա յեր հասնում:

Ապստամբության ժամանակը նշանակվել եր շատ ուշ, յերբ թշնամին ըստ ելության արգեն ոգտագործել եր կուսակցության ձեռքից բաց թողած ժամանակը և ամրացել եր գիրքերում: Կուսակցության ոպազմատինիքական պատրաստությունները, վոր տենգային թափով նյին սկսվել, կտրվել եյին քաղաքականությունից, վորը նախկին խաղաղ տեմպով եր տարվում: Մասսան չհասկացավ կուսակցությանը և չհասավ նրա հետեվից: Կուսակցությունն իսկույն հասկացավ, վոր ինքը կտրվել և մասսայից և կաթվածահար յեղափ: Սրա հետեվանքն եղավ առաջնակարգ ոպազմական գիրքերից՝ առանց կազի նահանջելը՝ հնարապոր ըոլոր պարտություններից ամենազաժանը:

Չի կարելի գործն այնպես պատկերացնել թե պատմությունը մեքենայարար հեղափոխության պայմաններ և ստեղծում և ապա կուսակցության առաջն պահանջով, ուզած ժամանակակի անում ստացիր և սինու մեջ դրած հրամեցեք և անում ստացիր և ստացական տուր: Այդպիսի բան չի լինում: Դասաւորական սլաքարում իր համար այնպիսի մի կարգը տեղական սլաքարում իր համար այնպիսի մի կարգը կուտի, վորը կարողանական գարգարդ պիտի կուտի, վորը ճանաչի հեղափոխությունը, յերբ այն գուռզ ե բազիքում, մի ափանգարդ, վորը հարկավոր ժամին հասկանալ իրենի ծրագիր կազմելու, թյան իմաստն հասկանալ՝ իրենի ծրագիր կազմելու, գիրերը բաժանելու և բուրժուազիային անողոք հարգած հասցնելու մի արվեստ: Յեվ անա վճռական ժամին Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը վոչ այդ լրագույն կուտիթյունը, վոչ այդ կարողությունն ավագեալի պարզեցի իր մեջ: Իրողության ելությունը ավելի պարզ պատկերացնելու համար մի բոլի յերեվակայենք, վոր մենք 1917 թ. հոկտեմբերին սկսեցինք տատանվել, սպասել, մի կողմ քաշվեյինք ուսեյինք, սպասենք առայժմ, դրությունը զեռ բավականաշափ չի պարզվել: Առաջին հայացքից թվում են հեղափոխությունը նապաստակ չի, դաշտ չի փախչի՝ յանեցինք հոկտեմբերին չանեցինք հեղափոխություն, կայսթե հոկտեմբերին չանեցինք հեղափոխություն, կարող եյինք քիչ ուշ մի յերեք ամիս հետո անել: Բայց այդ հասկացողությունը միանգամայն սխալ ե:

Նա հաշվի չի առնում հեղափոխությունը կազմող ըոլոր ազգակների շարժուն փոխհարաբերությունը:

Հեղափոխության ամենատանմիջական, ամենատռաջին պայմանը՝ մասսաների պատրաստակամությունն է հեղափոխություն կատարելու։ Սակայն այդ պատրաստակամությունը չի կարելի թրջոց դնել, այլ պետք է ոգոտագործել հենց այն մոմենտին, յերբ նա բացահայտ է դառնում։ Հոկտեմբերից առաջ բանվորները, զինվորները գյուղացիք բաշխելիների հետեւից ելին գնում, Բայց զահականակի յե, բնավ չեր նշանակում, վոր նրանք բաշխելիներ ելին, այսինքն ամեն դեպքում ու բոլոր պայմաններում կարող ելին կուսակցությանը հետեւելու նրանք հիմնաթափվել, հուսախարիվել ելին մենշևիկուներից ու հոկտեմբերից և հենց այդ պատճառով ել բաշխելիկան կուսակցության հետեւից ելին գնում, նրանք հույս ունելին, վոր բաշխելիները մենշևիկուներից ու հոկտեմբերից ավելի ամուս կը լինեն, վոր նրանք ուրիշ նյութից են շինված, վոր բաշխելիների խոսքը գործից չի տարբերվի, Յերբ բաշխելիներն այդպիսի պայմաններում տատանվելին, անվճականություն ցույց տային և սպասողական դիրք բռնիւթյուն այն ժամանակ նրանք շատ շուտով մասսաների աշբում հոկտեմբերի ու մենշևիկուների հետ կը հավասարվելին, մասսաները նույն արագությամբ կը հեռանային մեզնից, ինչպիսի արագությամբ վոր մոտեցել ելին մեզ։ Դրանով հենց արմատական փոփոխություն կը կատարվ սրուժերի փոխարարերության մեջ։

Վորովհետեւ ի՞նչ ասել ե, իսկապես, ուժերի փոխարաբերություն։ Դա մի շատ բարդ հասկացողություն է և բազմաթիվ տարրերից և կազմված։ Այդ տարրերի թվում կան շատ կայունները՝ այդպես և տեխնիկան արգարացնել, չկարողացավ մասսաների սպասումները վճռական հեղափոխական գործողությունների վերածել։ Ահա թե ինչու հոկտեմբեր-նոյեմբերից

յին կառուցվածքն են վորոշում, վորչափ վոր ուժերի փոխարաբերությունը պլումարիատի, գյուղացիության և մյուս գասակարգերի քանակով և վորոշում՝ այդ գեպքում մենք բավականաշափ կայուն տարրերի հետ գործ ունենք։ Բայց գասակարգի քանակն անփոփոխ ընդունելով նրա ուժը, զորությունը կտիված և նրա կուսակցության կազմակերպվածությունից, ու ակտիվությունից, մասսաների և կուսակցության փոխարաբերությունից, այդ մասսաների տրամադրությունից և այն։ Այդ ազգակներն արդեն շատ ավելի պակաս կայուն են, մանավանդ հեղափոխական շրջանում, իսկ մեր խոսքը հենց այդ շրջանի մասին ե։ Յեթե ծայրահեղ հեղափոխական կուսակցությունը, գեպքերի տրամաբանությամբ աշխատավոր մասսաների ուշագրության կինտրոնում կանգնած լինելով՝ մըմենտը ձեռքից բաց և թողնում, այդ գեղքում ուժերի փոխարաբերությունը փոխվում և արմատապես, վորովհետեւ կուսակցության ծնած հույսերը մասսաների մեջ հուսախարության կամ կրավորականության և խոր հուսալքման են փոխվում. այդ գեղքում կուսակցության հետ մնում են նրանք, վորոնք հաստատ և վերջնականապես կազպվել են կոմունիզմին, այսինքն փոքրամասնությունը։ Այդ եր, վոր տեղի ունեցավ Գերմանիայում անցյալ տարի։ Բոլորը, նույնիսկ բանվոր սոցիալ-գեմոլիցիաները սպասում ելին, վոր յերկերը փակուղուց դուրս են բերելու միայն կոմունիստները։ Կուսակցությունը չկարողացավ ընդհանուր այդ հույսերն արգարացնել, չկարողացավ մասսաների սպասումները վճռական հեղափոխական գործողությունների վերածել։ Ահա թե ինչու հոկտեմբեր-նոյեմբերից

հետո հեղափոխական տրամադրությունների տեղապություն և սկսվում. դա յէ, վոր բուրժուական-ընկերության ժամանակավոր ուժեղացման համար հող և պատրաստում, վորովհետև վորեւ ուրիշ ավելի խոր փոփոխություններ (հասարակության դասակարգային կառուցվածքի և եկանոնմիկայի մեջ) չեյին կարող տեղի ունենալ այդքան կարճ ժամանակամիջոցում:

Պարլամենտական վերջին բնարություններում Գերմանիայի Կոմունիստական կուսակցությունը 3,700,000 ձայն ստացավ: Դա, ինարկե, պրոլետարիատի լավ ու շատ լավ կորիզն է: Սակայն այդ թվանշանը զիալեկտիզորեն պիտի արժեքավորել: Վոչ մի կասկած չկա, վոր անցյալ տարվա ոգոստոս-սեպտեմբերին Կոմունիստական կուսակցությունը մյուս պայմանների նույնության գեպքում անհամեմատ ավելի շատ ձայն կրստանար: Ուրիշ կերպ ասած՝ դա նշանակում է, վոր նրա ազգեցությունը ավյալ մոմենտում նվազում է: Ծիծաղելի կը լիներ այդ փաստի հանդեպ կույր ձեռնալը. ջայլամի քաղաքականությունը հեղափոխականի քաղաքականություն չի: Սակայն պարզ պիտի ըմբռնել այս փաստի իմաստը: Յես արդեն տուացի, վոր Կոմունիստական կուսակցություններն եւ ազատ չեն դիալետիկայի որենքներից, նրանց զարգացումն եւ հակասություններով եւ ընթանում, վերելքների ու կրիպտոների միջոցով և կատարվում: Քաղաքական մակընթացության շրջանում արտգությամբ աճում և կուսակցության ազգեցությունը մասսաների վրա. տեղատվության շրջանում՝ ազգեցությունը նվազում է, կուսակցությունների մեջ ուժեղանում և ներքին զտման պրոցեսում:

Ամեն ինչ, վոր պատահական է, անհաստատ եւ թողնում հեռանում է, կուսակցության կորիզը սերտ համար խմբվում է և տոկունություն ձեռք բերում: Այդ միջոցով նա հեղափոխական նոր մակընթացի համար և պատրաստվում: Կացության ուղիղ արժեքավորումը և ուղիղ հեռանկարը սխալներից ու հիմաթափությունից բրկում ան: Այդ մենք տեսանք արդեն հետպահեցրմյան շրջանի արդյունաբերության վերելքի ու կրիզիսի խնդրում: Նույնը տեսանք մենք Յեվոպաշյում նոր ըեփորմիստական շրջան սկսվելու խնդրում: Այժմ մեզ անհրաժեշտ եւ բովանդակ իմաստով հասկանալ ու պարզ պատկերացնել այն փուլը, վորով կարմանիան և անցնում, հակառակ գելքում մենք չենք հասկանա, թե մեզ վաղվա որը ինչ և բերում:

1905 թ. պարտությունից հետո՝ մեզ յոթ տարի հարկավոր յեղափ, վորպեսզի շարժումը մեջը շակի և դեպի վեր ընթանա, տասներկու տարի պետք յեղափ, վորպեսզի յերկրորդ հեղափոխությունը պըութարիատին հաղթանակ բերի: Գերմանական պրոլետարիատն անցյալ տարի մեծագույն մի պարտություն կրեց: Վորոշ և այն ել բավական յերկար ժամանակամիջոց և հարկավոր, վորպեսզի նա մարսի այդ պարտությունը, ըմբռնի նրա դասերը, շտկի, նորից իր ուժերը հսկաքի. Կոմունիստական կուսակցությունը գերմանական պրոլետարիատին հաղթանակի կը հասցնի միայն այն գեպքում, յերբ նա ինքը անցյալ տարվա դասերն ամբողջապես կը յուրացնի: Վորքան ժամանակ կը խլեն բոլոր այդ պրոցեսները: Հինգ շարի, տասներկու տարի: Վոչ մի ուղիղ ու վորոշ պատասխան այդ հարցերին չի կարելի տալ:

Կարելի յե միայն այն ընդհանուր միտքը հայտնել, վոր զարգացման ընթացքը՝ քաղաքական կացության մեջ արմատական փոփոխություններ կատարվելու իմաստով՝ պատերազմից հետո ավելի արագ ե, քան պատերազմից առաջ: Տնտեսական առաջարիշում մենք նկատում ենք, վոր արտադրողական ուժեքը շատ դանդաղ են աճում, իսկ կոնյուկտուրայի լավացումն ու վատացումը ավելի հաճախակի յեն իրար հետեւում, քան պատերազմից առաջ: Նման տեսակի յերեվույթ նկատելի յե քաղաքականության (պոլիտիկայի) ասպարիգում. Փաշիզը և մենչեփմը իրար են հետեւում ու մեկը մյուսի տեղը բռնում մեծ արագությամբ. յերեկվա կացությունը խորը հեղափոխական եր, իսկ այսոր բուրժուազիան, ինչպես յերեվում ե, հաղթողի գերությն ե վողջ գծով: Դրանումն ել հենց կայանում ե մեր ապրած շրջանի խորը հեղափոխական բնույթը և այդ բնույթը մեզ յեզրակացնել ե տալիս, վոր սեակցիայի հաղթանակը Գերմանիայում յերկարան չի կարող լինել: Սակայն տվյալ մոմենտում մենք տեղատվության ենք հանդիսատես, և վոչ մակնթացության. բնականաբար մեր տակտիկան ել տվյալ կացության համապատասխան պիտի լինի:

7. ՅԵՎՐՈՊԱՆ ՅԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ

Անգլիայում բանվոր դասակարգի պահպանողական-ռեֆորմիստական և պացիֆիստական իլլյուզիաները, վոր շատ խարխլել ելին պատերազմի պատճառվ, այժմ նորից և ուժգին թափով աճում են բանական-ռեֆորմիստական կառավարության հովանու տակ:

Անգլիական բանվոր դասակարգի վողջ քաղաքական անցյալը, վորի բնորոշ արտահայտություններն են քաղաքական չափավորականությունը, համաձայնողականությունը, ուժփորմիզմը և բուրժուազիայի իմպերիալիստական քաղաքականության մասնակցելը՝ այս ամենը հիմա, իշխանությունը բանվորական կուսակցության ձեռքն անցնելուց հետո, մեծագույն քննության ե յենթարկվում:

Բանվորական կառավարությունն ինքն իր համար թեթևացնում ե այդ քննությունը, պատճառաբանելով թե ինքը մեծամասնություն չունի պարլամենտում և վոր այդ պատճառով ինքը պատասխանատու յէ վոչ ամեն բանի համար: Բայց, այնուամենայնիվ, պատճությունը փորձը կատարում ե ամբողջ ծավալով: Ինչ ել վոր լինի ձևական վախճանը՝ Մակդունայլլյան ռեժիմի արդյունքը կը լինի այն, վոր անգլիական բանվոր դասակարգի շարքերում կուժեղանաւ և կը խորանար քննադատությունը և ինքնաքննադատությունը: Իսկ դա նշանակում ե, վոր ձախ թեքը կամի: Անգլիայի համար կոմունիստական կուսակցություն կազմակերպելու իսկական շրջանը նոր ե բացվում:

Մակդունայլլյի կառավարությունը բանվոր դասակարգի վոչ միայն դեմոկրատական-պացիֆիստական իլլյուզիաները կրկնապատկեց, այլ և նրա ինքնագիտակցության աստիճանը բարձրացրեց: Զի կարելի ասել վոր այսոր անդիմական պրոլետարիատն ինքն իրեն տեր ե զգում տան մեջ վորովետե յեթի նա այդ զգացումն ունենար, այդ զեպքում նա իսկական ու իրական տեր կը լիներ: Բայց միջին ան-

դլիտական բանվորն ինքն իրեն առում և՝ յեթե մեր տրեպյունիսնիստներին արքան իշխանության դեկն և հանձնում, ուրիմն մենք ել մի բան արժենք: Յեզ ահա այդ գիտակցությունն ե, վորը, ինչքան ել սահմանափակումների յենթարկվի կոնսերվատիվ անցյալի կողմից, այնուամենայնիվ, ինքնին մի խթան և ուրիշ ապագայի համար: Բանվորներն ավելի պահանջելու են դառել, ավելի անհամբեր—դրա արդյունքն ե գործադուլների թվի աճումը Անգլիայում: Զուր չե, վոր «Թայմզը» գանդատվում ե, վոր իրենք շատ լավ լիդերներ ունեն, բայց նրանց շատ շուտ հետ են քշում բացահայտ հեղափոխականները: Շատ շուտը շատ շուտ չե, բայց հետ քշում են և պիտի հետ քշեն, հետ պիտի քշեն և կը քշեն (ծափանարություններ),

Իրենց տնտեսական և քաղաքական կացությամբ յեվրոպական յերկրներն ընդհանուր առմամբ դասավորված են Անգլիայի և Գերմանիայի միջև, գուցե մի բացառությամբ, վոր իտալիան այժմ նորից կարծես թե հեղափոխական առաջին շարքումն ե տեղ բռնում: Մուսոլինու ոեժիմի կործանումը շատ արագ կարող ե ընթանալ, իսկ այդ ոեժիմի բնության շնորհիվ նրա կործանվելը կարող ե շատ արմատական բնույթ ընդունել և կարող ե պրոլետարիատի առաջ նորից իշխանությունը գրավելու ինդիրը դնել: Մեր անելիքը իտալիայում այդ մոմենտի համար շատ ուժեղ և նախաձեռնությամբ ոժտված կուսակցություն ունենալու ե: Դա մեծ և դժվարին անելիք ե. բայց դա պիտի կատարել:

Առաջվա նման Ամերիկան առանձին տեղ և կը բավում: Պատերազմից առաջ ել Յեվրոպայի ու Ամե-

րիկայի զարգացման ընթացքը տարբեր եր, իսկ պատերազմից հետո տարբերությունը ավելի խորացել է: Համաշխարհային հեղափոխության մասին խոսելիս մենք այն պատկերացնում ենք չափազանց ընդհանուր գծերով: Այդ հեղափոխությունն իր առանձին՝ իրարից բավական մեծ ընդմիջումներով բաժանված փուլերը կունենա: Բոլոր նշանները վկայում են, վոր Ամերիկական հեղափոխությունը յեվրոպականից շատ հետո կը ծավալվի: Պատմականնորեն շատ հավանական ե գեպքերի մի ընթացք, ուր Արեվելքը վայր ե նետում իմպերիալիզմի լուծը, պրոլետարիատը իշխանության տեր ե գառնում Յեվրոպայում, իսկ Ամերիկան առաջվա նման կոտղիտալի ամրոց ե մնում: Այդ իմաստով Միացյալ Նահանգները կարող են դառնալ և արդեն իսկ պատմության հիմնական հականեղափոխական ուժ են դառնում:

Այդ չեն կարող հասկանալ միայն Փիլիստերները, վորոնց համար հարցը կեղծ-դեմոկրատական ձևով, իսպանական ճառերով և այլ անհեթեթություններով ե վճռվում: Պատերազմը չորս տարի կարող եր տեսլ միայն Ամերիկայի առանձնահատուկ գերի պատճառով: Նույն Ամերիկան եր, վոր պատերազմից հետո յեվրոպական բուրժուազիային ոգնեց իր գիրքը պահպանելու գործում:

Այժմ Ամերիկան «Եքսպերտների ծլագրի» միջնորով Յեվրոպայի աշխատավոր մասսանների ստրկացման մի բարդ սխտեմ ե կազմակերպում: Ամերիկան բոլորից համառ դիմադրում ե Խորհրդային Հանրապետության ճանաչմանը: Միացյալ Նահանգները առանցելորեն հարուստ են, թե արտաքին, թե ներքին քա-

դաքականության մեջ մարնյովըներ անելու համար ամերիկական բուրժուազիան չտևանված չափով նյութական միջոցներ ունի: Այս ամենը ի մի գումարած վկայում ե, վոր հաղթող յեվրոպական պրոլետարիատը ստիպված է լինելու հաշվի նստել ամերիկական կապիտալի հետ, իրեւ անհաջող և հզոր թշնամու հետ: Սոցիալ-դեմոկրատիան և առաջին հերթին գերմանական սոցիալ-դեմոկրատիան ամեն ինչ անում են «անդրովեյանության» դեմոկրատիան» մեծարելու և գովարանելու համար: Սոցիալ-դեմոկրատիան Ամերիկայով և ահեցնում բանվորներին՝ նրանց անպատկառության դեպքում և ընդհակառակը՝ մեծագույն բարեփներ խոստանում, յերբ յեվրոպական-դեմոկրատները ամերիկական բուրժուայի թեսի տակ հումանայնություն կնքեն, Դրա վրա և կառուցված յեվրոպական մենշեվիզմի վողք քաղաքականությունը: Առհասարակ բուրժուազիայի գործակատար հանդիսացող յեվրոպական սոցիալ-դեմոկրատիան՝ գեպքերի ընթացքով՝ անխուսափելու ամենալորեն ու ամենահարուստ՝ ամերիկական բուրժուազիայի գործակատարն ե դառնում: Ամերիկական կապիտալիզմի հիմնողով ե, վոր սոցիալ-դեմոկրատիան աշխատում և յեվրոպական բանվորների հեղափոխական կորովը ջլատել: Հատկապես նկատելի ե այդ 1918 թ. սկսած Գերմանիայում, յերբ կառուցկան վիլսոնիզմը բանվոր դասակարգի սեփական շարքերում՝ ամենատեխն հականեղափոխական աղքական հանդիսացագալ: Սպասելի ե, վոր ամենամօտ ապահանդիսացների ծրագրի իրականացման համեմատ սոցիալ-դեմոկրատիան ավելի կուժեղացնի պրոլետարիատը ահարեկումը ամենահզորը բարերար և

ահեղ Ամերիկայի ստվերի ոգնությամբ: Պայքարել այդ ահարեկման ու հիպնոզի դեմ՝ ասել ե նախապատրաստել յեվրոպական բանվորներին հեղափոխության համար. պայքարը ամերիկական հիպնոզի դեմ՝ հեղափոխության հաջողության կարեվոր պայմաններից մեկն ե: Յեվրոպայի բանվորները պիտի հասկանան, վոր միացյալ Յեվրոպան լիովին կարող ե վոչ միայն տնտեսապես անկախ գոյություն ունենալ այլև ամերիկական հականեղափոխության դեմ մզվելիք բաց կովում կարող ե ինքն իրեն պահել: Կոմունիստները յեվրոպական բանվորներին ասում են՝ յեթե իշխանության հասնեք, յեթե Խորհրդային Միացյալ Նահանգներ ստեղծեք, գրանով գուք միանգամից յերկու հզոր ցամաք իրար եք միացնում. ձեռներումդ կունենաք հոյակապ տեխնիկա, անծայրածիր տարածություններ և բնական հարստություններ և իշխանությանը գլուխ անցած պրոլետարիատի մեծագույն ինտուղիամ: Յեթե գուք յերես առ յերես համաշխարհային զինված հականեղափոխության դեմ կովելու լինեք՝ իսկ դա անխուսափելի յե՝ այն ժամանակ գուք ձեր կարմիր Բանակը կը կառուցեք և գուք ստիպված չեք լինի սկզբից սկսել, վորովհետեւ իրեւ խմորոց ունեք Խորհրդային Միության կարմիր Բանակը՝ պատերազմներում բոված և հողթանակներով թեփավորված: (Փոթորկալի ծափահարություններ)



ՀՀ Ազգային գրադարան



NL0186181

ԳԻՆԸ 20 Կ.

ՆՈՐ ԱԿՈՍ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

Լ.61-80 ՏԵՍԱԿ

Հ 1. 1. Տեղեկի. — Պար փուլն ենք անցնում
գ. 20 կ.

Հ 2. 6. Զաւենց — Մահկալ Մաքոյի պատմու-
թյունը գ. 20 կ.

Հ 3. 0. Հավիաննիսյան. — Դաշնակցությունը և
պատերազմը գ. 10 կ.

ՄԱԿԱՐԵԼԻ ՏԵՍԱԿ

Հ 4. Ալոյիկ Լինգների Արկածները

Հ 5. Ի. Օւենբուրգ. — Միամորմ (պատմվածք)